ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 231-Ա

06-060-017-001 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 0.00536 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24.05.2019Թ. N 178-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. N 186-Ն հրամանով, հիմք ընդունելով Թումանյանի շրջկոոպի վարչության 09.04.2002 թ. որոշումը, հանձնման ընդունման ակտը, Մերուժան Հմայակի Մակինյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Մերուժան Հմայակի Մակինյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 1, N 36/1 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-060-017-001), 1963թ. կառուցված նախկին բանջարեղենի կրպակի, 0.00536 հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով, կադաստրային արժեքի վճարման պայմանով, ճանաչել հողամասի սեփականության իրավունքը:
2. Համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 1, N 36/1 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-060-017-001), 0.00536 հա մակերեսով հողամասի բնակավայրերի

բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման նշանակության:

3. Բանջարեղենի կրպակի սպասարկման համար զբաղեցրած 0.00536 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը՝ 11899 (տասնմեկ հազար ութ հարյուր իննսունինը) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով հատկացնել Մերուժան Հմայակի Մակինյանին:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
7. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 24.05.2019թ. «06-060-017-001 ծածկագրում գտնվող, 0.00536 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողօգտագործման իրավունքը ձևակերպելու մասին» N 178-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 03
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 232-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 30-ի N 56-Ն որոշումը ***որոշում եմ՝***

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:
2. Հաստատել Ալավերդի համայնքի բյուջեի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 1, 4/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 03
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 233-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Արկադի Վարդանի Զավարյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1151397 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված վերաբաժանվող հողամասերի հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Թույլատրել Արկադի Վարդանի Զավարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ քաղաք Ալավերդի Բաղրամյան հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասից (ծածկագիր՝ 06-002-001-000014) վերաբաժանվող 0.01122 հա մակերեսով հողամասին տրամադրել համանք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Բաղրամյան թաղամաս, N 19/1 փոստային հասցե, իսկ մնացած հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Բաղրամյան թաղամաս, N 19 փոստային հասցե:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 03
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 234-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՌԱՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 10.07.2020թ. N 204-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 30072020-06-0051 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Քրիստինե Սիմոնի Աղիկյանն ընդունել է մառանը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/28-31/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 10.07.2020թ. N 204-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 25.2 քմ արտաքին մակերեսով (19.4 քմ ներքին մակերեսով) մառանը՝ 43344 (քառասուներեք հազար երեք հարյուր քառասունչորս) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00252 հա մակերեսով հողամասը՝ 13306 (տասներեք հազար երեք հարյուր վեց) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Քրիստինե Սիմոնի Աղիկյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 03
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 235-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 17.07.2020թ. N 216-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 30072020-06-0054 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Կամո Սերյոժայի Մխիթարյանն ընդունել է բնակելի տունը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Գ. Օսիպյան փողոց, N 3/9-9/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 17.07.2020թ. N 216-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 76.03 քմ արտաքին մակերեսով (64.3 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը՝ 196157 (հարյուր իննսունվեց հազար հարյուր հիսունյոթ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.0098 հա մակերեսով հողամասը՝ 51744 (հիսունմեկ հազար յոթ հարյուր քառասունչորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Կամո Սերյոժայի Մխիթարյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում բնակելի տան և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 03
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 236-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածովի 1-ին կետի 22-րդ մասով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության տնօրենի կողմից 14.07.2020թ. տրված N 0-50 տեղեկանքը ***որոշում եմ***՝

Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի թիվ 1 բազմաբնակարան շենքին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 2 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. օգոստոսի 04

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 237-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

   Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038) բնագավառի հոդված 5134-ում նախատեսված 80.0 հազ. դրամը տեղափոխել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ (բաժին 01, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262121321, հոդված 5134):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 04
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 238-Ա

06-002-0050-0160 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ 0.13 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.02149 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Սարգիս Կամոյի Երիցյանի դիմումը, անձնագրերի պատճենները, ժառանգության իրավունքի վկայագրերը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և բնակելի տան հատակագծերը, 01.12.1993թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20/9 որոշման քաղվածքը, «ԹԻՎ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 13.07.2020 թ. տրված տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 6, N 9 փոստային հասցե:
2. Վերականգնել Սարգիս Կամոյի Երիցյանին, Անահիտ Ալբերտի Մարգարյանին, Ազնիվ Սարգիսի Երիցյանին ժառանգության իրավունքով պատկանող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 6, N 9 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0050-0160) բնակելի տան և 0.13 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը:

3. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1994 թվականին կառուցված բնակելի տունը և տնամերձ հողամասից ավել օգտագործվող, սահմանազատված 0.02149 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Սարգիս Կամոյի Երիցյանի (ծնված՝ 08.03.1967թ.), Անահիտ Ալբերտի Մարգարյանի (ծնված՝ 31.10.1971թ.), Ազնիվ Սարգիսի Երիցյանի (ծնված՝ 19.08.1991թ.) համասեփականությունը:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 04
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 239-Ա

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.5 մասով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 30.07.2020թ. N 60-Ա որոշումը ***որոշում եմ՝***

1. Փոփոխել Ալավերդու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանումները.
   1.1 «Ալավերդի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.
   1.2 «Ալավերդի համայնքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.
   1.3 «Ալավերդի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.
   1.4 «Ալավերդի համայնքի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.
   1.5 «Ալավերդի համայնքի թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.
   1.6 «Ալավերդի համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.

1.7 «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.

1.8 «Ալավերդի համայնքի Աքորի գյուղի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի Աքորի գյուղի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ.

1.9 «Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անվանումը փոփոխել «Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ անվամբ:

2. Հաստատել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

3. Հանձնարարել ՀՈԱԿ-ների տնօրեններին՝ սահմանված կարգով կատարելու կանոնադրությունների և սեփականության վկայականների փոփոխությունների պետական գրանցման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. օգոստոսի 04
ք. Ալավերդի